

1 + 1

Կայք էջ՝ 1u1.am



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԹԵՐԹ 27 ՓԵՏՐՎԱՐԻ 2022թ. թիվ 2 (31)

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՆԹԱԳՐՈՒՄ Է ԻՆՉ-ՈՐ ՉԱՓԻ ՂԱՐՑԱԴՐԱՆՔ /ԿՈՆՑՈՒՑԻՆ/



ՄԻՃՑ ԼԻՆԵԼ ԼԱՎԱՏԵՍ, ԵՎ ԳՈՐԾԸ ԿԵՆՔԻ

Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոցի «1+1» մարզային դպրոցական թերթը հյուրընկալվել էր Միքայելյանների ընտանեկան ֆերմա, որտեղ զբաղվում են պանրագործությամբ:

Միքայելյանների ֆերման հիմնվել է 2012 թվականին, երբ Արմանը Երևանից կնոջ՝ Մարինեի և երեխաների հետ վերադարձել է հայրենի տուն՝ հայրական օջախ, գնել են վեց կով և վարել ֆերմերային տնտեսություն:

Մեկ ամիս հետո սկսում են պանիր պատրաստել: Սկզբում արտադրում են կաթ, մածուն, այնուհետև նաև՝ աղաջրային պանիրներ՝ լոռի, չանախ: 2-3 տարի անց արդեն որոշակի գիտելիքներ են ունենում և սկսում հայկական գինիներով հնեցրած պանիր արտադրել: Դրանք դարձան ռեստորանների համար նախատեսված դեսերտային չոր թարեքային հասունացմամբ առաջին պանիրները, որոնք համադրվեցին հայկական գինիների հետ: Լավ որակի պանիր ստանալու համար բավական ժամանակ պահանջվեց՝ 2-2,5 տարի. 2 տոննայից ավելի կաթ են փչացրել, որ հասել են արդյունքի:



Հարց- Ինչո՞վ է պայմանավորված այդքան հետաքրքիր տեսականի ունենալու գաղտնիքը:

Պատասխան- Մարինեն՝ կինս, ով մասնագիտությամբ կենսաքիմիկ է /նրա մասնագիտությունը շատ պետք եկավ տեխնոլոգիական պրոցեսները հասկանալու համար/, մեր տեխնոլոգն է, նրա ուսերին են դրված պանրային բոլոր խնդիրները: Անընդհատ նոր փորձեր է անում,

տարեկան 8-10 նոր տեսակի պանիրներ ենք փորձում, և նրանցից գրեթե 2-3-ը հաջող են ստացվում ու պիտանի են արտադրության համար: Դա մեզ համար լավ ցուցանիշ է:

Հ- Ի՞նչ անունով եք կոչել Ձեր արտադրած առաջին պանիրը, որը ստանալու համար երեք տարի է պահանջվել:

Պ- Այն կոչվում է «Գինու բուրբ» /Aroma Del Vino/ իտալերեն//, այն գինու մեջ է հասունացվում և ունի գինու բուրբ: Ընդհանուր հասունացման ժամանակը տևում է վեց ամսից մինչև մեկ տարի, որից մոտավորապես երկու ամիսը պահվում է գինու մեջ:

Հ- Արտադրամասում քանի՞ աշխատող ունեք:

Պ- Մենք չորս աշխատողներ ունենք:

Հ- Որտե՞ղ եք հիմնականում իրացնում Ձեր ապրանքը:

Պ- Մի մասը Երևանյան ռեստորաններում, հյուրանոցներում, որտեղ հիմնականում զբոսաշրջիկներ են, նաև համայնքի տեղի վաճառքի միջոցով ենք իրացնում:

Հ- Ձեր աշխատողներից քանի՞սն են մասնագիտացված այս գործում:

Պ- Մենք միշտ անցկացնում ենք դասընթացներ, որպեսզի համապատասխանենք նոր ապրանքների պայմաններին:

Մեր գրույցից հասկացանք, թե ինչպիսի գիտելիքներ և մասնագիտություն պետք է ստանան դպրոցականները, որ լավ մասնագետ դառնան նման ոլորտում: Որոշում ընդունելիս յուրաքանչյուր երեխա, ծնող պետք է հասկանա՝ եթե երեխան չունենա կամք՝ շարունակաբար սովորելու, զարգացնելու իր գիտելիքները, չի ունենա հաջողություն: Այսինքն գործարարներին

պետք է թե՛ հասարակ աշխատող և թե՛ մասնագետ միայն այն սկզբունքով, որ նրանք ընդունակ են սովորելու և ընդունելու գործարարի փոփոխվող աշխարհի օրենքները: Իրողությունը այնպիսին է, որ միշտ մարդկությունը ձգտում է ավելի հեշտին, ավելի գեղեցիկին: Այս համաճարակը ցույց տվեց, թե ինչպես երկրագունդն է փոքր ու շաղկապված, այնպես էլ բոլոր «ֆերմաներն են շաղկապված»:

Իրականում կցանկանայինք, որ երիտասարդները ձգտեն աշխատել և ստեղծել հավելյալ արժեք, որ շարժվեն ստեղծագործողի փիլիսոփայությամբ. այդ դեպքում հողի աշխատավորը ավելի շահագրգռված կլինի: Աշխատանքում առաջնային պետք է լինի ռիսկի գործոնը:

Երեխաները պետք է լավ սովորեն դպրոցական առարկաները, քանի որ բոլոր առարկաները ունեն իրենց դերը բնության մեջ: Կուզենանք, որ նրանք լսեն ծնողներին, օգնեն նրանց տնտեսական գործերում, այդ պայմաններն են ստեղծում փորձի փոխանակում, և ամենագլխավորը՝ շատ կուզենա-




յինք, որ երեխաները տեսնեն ու գնահատեն գեղեցկությունը ու նրա արժեքը:

Մեզ շատ դուր եկավ Միքայելյանների ընտանեկան ֆերման: Շնորհակալություն ենք հայտնում նրանց, որ մեզ ժամանակ տրամադրեցին և պատմեցին, թե ինչ է տեղի ունենում այդ փոքր ընտանեկան ֆերմայում, որը համախմբվածության արդյունք է, որտեղ ուղղորդում է գաղափարը, որը բերում է երևացող արդյունք: Կցանկանայինք, որ մեր երեխաները շարժվեն առաջ և ստեղծեն ավելի մեծ ձեռնարկություններ, որը կխոսի մտավոր և հոգևոր կարողության մասին, ինչը որ սկիզբ է դնելու մեր պետականության ամրապնդմանն ու բանակի հզորացմանը, բարեկեցիկ կյանքի կերտմանը:

«1+1» թերթի խմբագրություն

1



ԻՆՉՆ Է ՄԱՐԴՈՒՄ ԳԱՐԶՆՈՒՄ ՀԱՅՈՒԱՆԻ, ԵՎ ԻՆՉ Է ԱՌԱՋԱԳԵՄ ԲԱՌԻ ԻՄԱՍՏԸ



Ինչպիսի որակներ պետք է ունենա մարդը, որ համարվի հաջողակ:

Հոգեբանների կարծիքով այդ հարցերի բանալին երկուսն են՝ խելք և կամքի ուժ:

20-րդ դարի հոգեբան Ռոյ Բաու-մաստերը հետազոտական եղանակով ապացուցեց, որ գոյություն ունի կամքի ուժ: Նրա աշխատակիցները եկան այն եզրակացության, որ կամքի ուժը նման է մկանների, որը կարող է հյուսվել, բայց կարող է և ամրանալ, եթե հաճախ զբաղվի մարմնամարզությամբ: Մյուս ոչ քիչ կարևոր հետախոյանքն այն է, որ, ամրացնելով մեր կամքի ուժը, մենք

բարձրացնում ենք մեր կյանքի որակը: Գիտնականները համոզվեցին, որ մարդու կյանքի գերկշռող խնդիրները առաջ են գալիս, երբ չկա բավարար ինքնակազմակերպվածություն, օրինակ ծախսերի ավելացում, վարկերի շատացում, խմիչքը չարաշահելը, շատ ուտելը, զայրանալը:

Խնդրեք, որ մարդիկ ասեն իրենց լավ կողմերը, և նրանք կմատնանշեն արդարություն, բարություն, առաջադիմություն, բարոյականություն և մի շարք առավելություններ, բայց նրանք միշտ բաց են թողնում ինքնատիրապետումը: Հարցմանը, որտեղ մասնակցում էին 2 միլիոն մարդ ամբողջ աշխարհում, ինքնակազմակերպման մասին կամ չէին ասում կամ էլ ասում էին ամենավերջում, իսկ երբ մարդուն հարցնում էին իրենց թույլ կողմերը, մարդիկ առաջինը նշում էին ինքնակազմակերպումը:

Մարդկանց թվում է, թե կամքի ուժը ինչ-որ գերբնական ունակություն է, որը «միանում» է էքստրեմալ դեպքերում:

Հետազոտելով մի խումբ մարդկանց՝ 200 կանանց ու տղամարդկանց, ովքեր ապրում էին կենտրոնական Գերմանիայում, Բաումաստերը եկավ հակառակ հետևության, քանի որ գիտնականները հետևող սարքի օգնությամբ ուսումնասիրել են մարդկանց ցանկությունները:

Գիտնականները ընդունեցին 10 000-ից ավելի ազդանշաններ առույգ

մարդկանց մոտ՝ կախված իրենց ցանկություններից:

Փորձարկման ժամանակ շատերը դիմադրում էին իրենց մոտ նշմարվող ցանկությանը:

Ստացված տեղեկության համաձայն՝ չորսից մեկը լարում էր իր կամքի ուժը, որպեսզի կանխի իր ցանկությունը: Ամենատարածված գայթակղությունը ուտելու ցանկությունն է, հետո քնելու և այլն:

Փորձարկվողները անում էին ամեն ինչ, որ չտրվեն գայթակղությանը:

Ստացված տեղեկությունների համաձայն՝ օրվա 4 ժամվա ընթացքում մարդիկ պայքարում էին իրենց ետ պահելու գայթակղությունից:

Հոգեբանական փայլուն թեորեման միշտ չէ, որ հարցի լուծում է:

Պրոգրեսը կախված է ոչ միայն թեորեմներից, այլ հիմնականում նրանից, թե ով կզտնի խելացի, կատարելագործված ձև՝ ստուգելու թեորեմն արևադարձային:

Ուղևոր Միշելը իր կոլեգաների հետ ուսումնասիրեց երեխաների պահվածքը: Նրանց հետաքրքրում էր, թե ինչպես կդիմադրեն երեխաները ինչ-որ ցանկություն կատարելիս, և նրանք գտան ոչ տիպային ձև. հետևել 4 տարեկան երեխայի պահվածքին:

Երեխաներին հերթով տեղափոխեցին առանձին սենյակներ, ցույց տվեցին մարմնալար և ամեն մեկին բացատրեցին, որ նա կարող է միանգամից ուտել այդ մարմնալարը, բայց եթե

մի քիչ սպասի, երբ կգա փորձարարը/նա կգա մոտավորապես 10 րոպեից, ապա նա կստանա ևս մեկ մարմնալար: Երեխաներից մի քանիսը միանգամից կերան մարմնալարը, իսկ մի մասը դիմացավ և ստացավ ևս մի մարմնալար:

Տարիներ անց Ուլտեր Միշելին միամտաբար պատմեցին, որ այդ փորձերը նրանք արել էին այն դպրոցներում, որտեղ սովորել են նրա երկու աղջիկները: Նրանք պատմել են, որ այն երեխաները, ովքեր միանգամից կերել են մարմնալարները, նրանք հետո ունեցել են ոչ լավ արդյունք սովորելիս ու փողոցում եղել են անկարգապահ: Միշելը ու իր կոլեգաները սկսեցին հետևել այն երեխաներին, ովքեր մասնակցել էին փորձարկմանը և արդեն հասուն մարդիկ էին: Նրանք եկան այն եզրակացության, որ նա, ով չորս տարեկան հասակում ունեցավ կամքի ուժ, դիմացավ 10 րոպե և ստացավ ևս մեկ մարմնալար, բարձր գնահատականներով սովորել և ավարտել է դպրոցը, պատասխանատու մարդ է, նրա մարմնի քաշը ավելի քիչ է, ալկոհոլի և թմրանյութի նկատմամբ հակում չունի: Սիրում է իր աշխատանքը և պատասխանատու է:

Գիտնականները եկան այն համոզիչ եզրակացության, որ ինքնակազմակերպումը կամքի կարևոր ուժն է և բանալի հետագա հաջողությունների:

Մանուշակ Թովմասյան

ՈՒՍԱՆՈՂԻ ԽՈՂԵՐԻՑ



Ես Ռոզան եմ՝ Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի ֆինանսների բաժնի երկրորդ կուրսի ուսանողուհի: Ավարտելով Գանձակ գյուղի N 1 միջնակարգ դպրոցը՝ ընդունվեցի համալսարան և այժմ սովորում եմ ինձ համար սիրելի ու հոգեհաճ ազատ դարձած մասնագիտությամբ: Մասնագիտությունս ընտրել եմ դեռ մանկուց: Երբ այցելում էի բանկ, տեսնում գեղեցիկ հագուստներով ու բարեհամբույր վերաբերմունքով աշխատակիցներին, երազում էի լինել նրանց տեղում:

Այժմ երազանքիս իրականացման ճանապարհին եմ: Իհարկե, ամեն բան դժվար կլինեք առանց քրտնաջան սովորելու, անվերջ կարդալու, նոր գիտելիքներ ստանալու անհագ ցանկության, անքուն գիշերների, նպատակասլացության և, իհարկե, իմ սիրելի ուսուցիչների և դասախոսների:

Ինչու ոչ, լինում են նաև հիասթափության պահեր, երբ հանդիպելով որևէ արգելքի՝ մտածում ես, որ, վերջ, դու պարտված ես: Բայց սթափվում ես ու հասկանում, որ չպետք է դժվարությունը դառնա խոչընդոտ, այլ այն պետք է ծնի նոր հնարավորություններ:

Մասնագիտությունս ընտրելիս պետք է առաջնորդվել սեփական նախասիրություններով, ոչ թե լսել, թե ինչ «բարի» խրատներ են տալիս մարդիկ: Ես իմ մասնագիտությունս ընտրել եմ սիրելով այն: Եվ ցանկացած գործ՝ կապված իմ մասնագիտության հետ, ես անում եմ մեծ սիրով և նվիրումով:

Միշտ պետք է հիշել, եթե մասնագիտությունս ընտրում եք պարտադրանքով, այն երբեք չեք սիրելու: Ուստի ընտրեք ձեր սրտի մասնագիտությունը և կարճ ժամանակ անց կհասկանաք, որ դուք մասնագիտության մեջ եք, իսկ մասնագիտությունը՝ ձեր:

Կարդացեք շատ գրքեր, մի՛ բավարարվեք միայն ձեզ փոխանցված գիտելիքներով: Ներկայումս կիրթ և բանիմաց մարդիկ ամենաշատն են հարկավոր մեր հասարակությանը: Մեզանից յուրաքանչյուրը պետք է գիտակցի, որ, շուկայում մրցունակ մասնագետ դառնալով, մեր գիտելիքները մեր երկրի շահերին ու բարօրությանը ծառայեցնելով միայն կարելի է ունենալ լուսավոր ու պայծառ ապագա:

Եվ վերջում մեջբերեմք Նելսոն Մանդելայի հետևյալ խոսքերը. «Կրթությունը ամենահզոր զենքն է, որը դու կարող ես օգտագործել՝ աշխարհը փոխելու համար»:

Ռոզա Աբրահամյան

ԱՂԱԳԱՆ ԵՄ ԵՄ

Ապագան գալիք ժամանակն ու գալիք կյանքն է, որն հետևում է ներկային: Այն մեր կյանքի մի մասն է, որին մենք շատ երկար ենք սպասում: Երկի յուրաքանչյուր մարդ մտածում է այն մասին, թե ի՞նչ է լինելու վաղը, ի՞նչ է սպասվում նրան, և յուրաքանչյուրին հետաքրքրում է, թե ինչպիսի շրջադարձ կկատարի կյանքը:

Ես գիտեմ, որ երբեք չպետք է վատը մտածել ապագայի մասին, միշտ պետք է լինել պոզիտիվ, քանի որ հենց մենք կառուցում ենք կյանքը, և մեր ապագան մեր ձեռքերում է, այն ստեղծվում է մեր մտքերով և ներկայում կատարած որոշումներով:

Ինչքան հրաշալի իրադարձություններ են մեզ սպասվում ապագայում, ինչքան երջանիկ պահեր, և թեկուզ միայն այդ միտքը պիտի ստիպի յուրաքանչյուրին ապրել, ապրել ներկայով՝ ուղղելով անցյալի սխալները և մտածելով ապագայի մասին, պետք է շարժվել առաջ, վստահ նայել ապագայի աչքերի մեջ և երբեք չհամձնվել:

Կյանքում, հանդիպելով շատ դժվարությունների, փորձությունների, ես մեծանում եմ: Սկսում եմ հասկանալ ինձ, գտնել իմ տեղը հասարակության մեջ: Մեր երկիրը հիմա կանգնած է մեծ փորձությունների առաջ: Սակայն այդ ամենից պատվով դուրս գալու համար պետք է վստահել ապագա սերնդին: Անգամ փոքրիկը՝ այն մանուկը, որը նոր է սկսում քայլել, պետք է իմանա հայրենասիրության մասին և դեռահասության տարիքում մտածի իր ապագայի մասին:

Բոլորս էլ ունենք երազանքներ, նպատակներ, որոնք զուցե և կիրականանան, բայց մեծ ջանքեր կպահանջեն՝ աշխատանք, համբերություն, գիտելիքներ: Իմ ամենամեծ երազանքը և

ԵՍ ԲԱՐԿԱՆՈՒՄ ԵՄ, ԵՐԲ...



Երբեմն կյանքում ամեն ինչ չէ, որ լինում է այնպես, ինչպես մենք ենք ցանկանում:

Լինում են պահեր, երբ աշխարհը շատ գեղեցիկ է թվում, լինում են պահեր, երբ զարմանում ես ու նաև բարկանում, որ մարդը կարող է ընդունակ լինել նման պահվածքի:

Ես շատ եմ բարկանում, երբ իմ շրջապատում մարդիկ իրենց վատ են դրսևորում:

Օրինակ՝ երբ աղտոտում են իրենց շրջապատող բնությունը, առանց ափսոսելու փչացնում ուրիշներին պատկանող զույքը, աղբը նետում են որտեղ պատահի: Բայց չէ՞ որ բնության մաքուր օդը մեզ այնքան անհրաժեշտ է մեքենաների ու տեխնիկայի այս դարում:

Երբ փողոցում, տրանսպորտում տարիքով

մարդիկ հարգանքի չեն արժանանում, դա նույնպես ինձ շատ է բարկացնում: Չէ՞ որ նրանք մեր բոլորի տատիկներն ու պապիկներն են և մեր օգնության կարիքը շատ ունեն:

Բարկանում եմ, երբ աշակերտը դպրոց է հաճախում ոչ թե սովորելու և գիտելիք ձեռք բերելու համար, այլ անիմաստ օր է վատնում, չի սովորում և խանգարում է մյուսներին: Մինչդեռ ծնողները նրա հետ շատ մեծ հույսեր են կապում:

Երբեմն շատ ծնողներ չեն հետևում իրենց երեխաների դաստիարակությանը:


Երբեմն շատ տղաներ հարևանի այգուց մի քիչ գողանալու համար կոտորում են նաև ծառի ծյուղերը, որը շատ տգեղ երևույթ է: Հետո շատ հեշտությամբ գողանում են ուրիշի ունեցվածքը, և նրանց դա բոլորովին ցավ չի պատճառում:

Բարկանում եմ, երբ որ ազնվությունը երբեմն չի գնահատվում:

Այսպես կարելի է երկար թվարկել մարդկանց կողմից արվող սխալ քայլեր, որոնց հանդիպում ենք ամենուրեք: Իսկ եթե յուրաքանչյուր ոք պատասխան տա իր արած ամեն մի սխալ քայլի համար, մենք ստիպված չենք լինի բարկանալ...

Սկրյաչան Նոնա
Սևանի N4 հիմնական դպրոց, 7-րդ ա դասարան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՍԵՂԻՍ...



տամարտերը և պատերազմի հերոսներին: Մի մասն էլ Հայաստան ասելիս հիշում է մի քարքարոտ ու ամայի տարածություն, որտեղից հեռանալով իբրև փրկվել է: Ցավոք, այդպիսիք շատ են: Ես ուզում եմ, որ մենք ապրենք ազնիվ, սիրենք միմյանց, մեր հողն ու ջուրը, նվիրվենք հայրենիքին այնպես, որ ամեն անգամ Հայաստան ասելիս ավելի գո-րանանք ու հավատանք մեր երկրի լուսավոր ապագային ու Հ. Սահյանի պես մենք էլ ասենք

Իս էլ մահիւր ու՞մ շուՆՆ է...
 Մարգարոյան Հայկ
 Արտանիշի միջն. դպրոց
 8-րդ դասարան

ԻՍԿԱԿԱՆ ՂԱՅ ՂԱՅԻՐԸ



Ես իմ երեխային Դավիթ եմ մեծացնելու, Զարյե եմ մեծացնելու, Մխիթար ու Նարեկ եմ մեծացնելու, հային արժանի ոգով եմ դաստիարակելու: Տղայիս միշտ ասելու եմ ուժեղացիր, ղովարություններից մի վախեցիր, կարողացիր պաշտպանվել:

Իսկական հայ հայրը նա է, ով կռվի է գնում սերն ու կարոտը սրտում պահած, ով պայքարում է մինչև վերջ, ով հարգում է իր կնոջն ու մորը, ով չի դավաճանում իր սկզբնույններին:

**Գևորգյան Արամայիս
6-րդ դասարան,
Արտանիշի միջն. դպրոց**

ဂံၤ ဃုာ် နီၣ် တဲးတဲး

Երբ ես փոքր էի, կարծում էի, թե իրական հերոսները լինում են գեղեցիկ համազգեստով՝ օժտված ինչ-որ գերբնական ունակությամբ: Սակայն հասկանում եմ, որ միայն հատուկ համազգեստով չեն հերոսանում: Իսկական հերոսը ցույց է տալիս իր աշխատանքը, բարությունը և սերը մարդկանց նկատմամբ: Այս երկրի միայն շատ մարդիկ կան, որ օգնում են մարդկանց՝ վրայ իրենց անունը բարձրացնելու, գովաբանելու համար:

Բայց ինձ համար հերոսներ շատ կան՝ Մոսթես Մելքոնյան, Վազգեն Սարգսյան, Գարեգին Նժդեհ։ Կան բանաստեղծներ կամ երգիչներ, որոնք ևս արժանի են հերոսի կոչման, օրինակ՝ Հովհաննես Թումանյան,

ԻՄ ԵՐԱՋԱՆՔՆԵՐԻ ՏՈՒՆԸ



Երազանքներ իմ հոգու բանալիներ, իմ կյանքի ամենաթանգարժեք ուղեկիցներ: Երազանքներ ի, իծներ, նպատակներ, որոնց հասնելու համար ամհրաժեշտ է մեծ, քրտնաշան աշխատանք: Առանց երազանքների մարդ գոյություն չունի, գոյություն չունի նաև երազանք՝ առանց նպատակի:

Իմ երազանքների տուներ երկուսն է, առաջինը՝ ցանկանում եմ լավ մարդ դառնալ, նվիրված լինել ընկերներիս, պիտանքի լինել հայրենիքիս, շրջապատված լինել բարի և հարազատ մարդկանցով, ունենալ լավ շրջապատ, հասուն մտածելակերպ, դառնալ մյուս մասնագետ, կյանքս անցկացնել արկածներով: Այս բոլոր երազանքներս միասին կազմում են իմ երազանքների փոքրիկ տունը:

Երկրորդը՝ իմ երազանքների տնակը... տուն, որ-
տեղ կիշխի համերաշխություն, տուն, որի ամրություն-

ԱՊՐԵԼ՝ ՍԻՐԵԼՈՎ



Ես կարծում եմ, որ մարդիկ ապրում են մեկը մյուսին մախանձելով և դավաճանելով: Կուզեի, որ մարդիկ ապրեն միմյանց հարգելով և սիրելով, հասկանալով և ներելով: Հաճախ ենք տեսնում, որ փոքրը մեծին չի հարգում: Ես իմ ծնողներից սովորել եմ սիրելով ապրել, հարգել մեծին ու փոքրին: Հասկացել եմ, որ պետք չէ ստել, մախանձել, դավաճանել: Պետք է սիրելով ապրել, չէ որ սերը հրաշքներ է գործում, սրտեր է բժշկում, ցավերն է մեղմացնում: Սիրենք բնությունը, երկիրը, հողը, մարդուն, սեր տանք ու ապայման սեր կվայելենք:

Արտանիշի միջև. դպրոց, 8-րդ դասարան

Շառլ Ազնապուր:

Երբ մեծանամ, ես
նույնպես կցանկանամ
ինչ-որ հերոսություն
անել, օգնել մարդկանց:
Ցանկանում եմ ապագա-
յում իմ գործով ծառայել
ու օգնել մարդկանց,
ամեն օր ինչ-որ բարի
գործ անել ու արժանի լի-
նել մեր հերոսների հետ-
նորդը լինելուն:

Աբադյան Լիլիթ
Արտանիշի միջն. դպրոց
8-րդ դասարան



ըր կորոշովի ոչ թե նրանից, թե ինչից են տան պատե-
րը, այլ թե ինչքան ամուր են իրարից բռնված բնա-
կիչները, տուն, որը ծննդան ցուրտ օրերին կտաքանա
միմյանց համըպե ունեցած ջերմությունից, որտեղ
ծաղիկները կլինեն նրանց աչքերի մեջ, որտեղ միշտ
կլավի երեխաների զրնգուն ծիծաղ, տուն, որը լցված
կլինի կյանքով... և այնուամենայնիվ, երբ այս ամենը
խառնում են մանկական պարզ ու անկեղծ երազան-
քիս հետ, տեսնում են մի փոքրիկ տնակ, որքան հա-
սարակ, նույնքան մաքուր՝ լի սիրով ու ջերմությամբ
ծովի ափին՝ կտրված մարդկանցից ու ձայներից։ Սի-
րում են խաղաղություն, լուծություն, ուզում են, որ
խանգարող միակ համգամանքը լինեն բնության
ձայները, այդ մեկ լուծությունը երբեք չեն փոխի հա-
զար խոսքերի հետ։ Տան տեսում ուզում են անտա-
զեղեցիկ այգիով, ծաղիկներով։ Երբ մտնես տուն,
տեսնես անհոգ ընտանիք մի սեղանի շուրջ։ Շատ են
սիրում լինել հասարակ ու անկեղծ, ուզում են իմ
տնակը նույնպես այդպիսին լինի, ճոխություններ
այդքան էլ չեն սիրում մտածելով՝ մեկ է ոչինչ չենք
տանելու, միայն՝ անուն, պատիվ։ Երազանքիս տունը
պատկերացնելով՝ մուլտֆիլմի տնակներն են պատ-
կերացնում, հենց այդպիսին են ուզում, քանի որ
փոքր տան մեջ ավելի ջերմություն են տեսնում։ Եվ
ամենակարևորը, իմ տունը՝ իմ հայրենիքն է։

Զուլոյան Թամարա
9-րդ դասարան, Երանոսի N1 միջն. դպրոց

ՀԱՎԱԵՐԺ ՀԻՇՎԱՌՆԱԿԱՆ ԱՆՈՒԽՆՆԵՐ

Սարուխան գյուղի N1 միջնակարգ դպրոցում կայացավ Հայրենական Մեծ պատերազմի վետերան, մանկավարժ և գրող Մեխակ Ավետիսյանի հեղինակած «Սարուխանի հերոս զավակը» գրքի շնորհանդեսը, որը համընկավ նրա ծննդյան 100-ամյա տարեդարձի հետ:

Մեխակ Ավետիսյանի հեղինակած «Սարու-խանի հերոս զավակը» գիրքը պատմում է նրա ծնո՞ւ, Արցախյան վերջին պատերազմում հերոսի մահով ընկած Զակյոբ Արայիկի Զարուբանյանի կարճատև, բայց անմահացած կյանքի մասի



**Կյանքդ տվիր հայրենիքիդ,
Զբոլորած քսան տարիդ,
Հավերժ կմնաս մեր սրտում,
Եվ՝ քո սիրած Սարուխանում:**

Մեխանիկ և ՎԵՏԻՍՅԱՆ

ՄԵՐ ԵՎ ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆ



Սերո աշխարհի
ամենագեղեցիկ,
ամենալավ և
ամենկարևոր
զգացմունքներից
է, առանց որի
մարդ չի կարող
ապրել: Սիրո շնոր-
հիվ բոլոր հեքի-
աքներում բարին
հաղթում է չարին:
Եթե մարդ լցված է
սիրով, ապա նա
շատ երջանիկ է:
Սերը անմահական
զգացմունք է,
ամոթ բան չէ սիրե-
լը, սերն է միավորում մարդկանց սրտերը: Բայց կա
նաև մի ուրիշ զգացմունք՝ ատելությունը: Այն
տիաճ է, կարծես մի հիվանդություն է, որով մարդը
վարակվում է, երբ մեկին չի սիրում: Այս զգացմուն-
քի պատճառով մարդ կարող է կործանվել և կոր-
ծանել իր ընտանիքի անդամներին: Եթե մարդ լց-
ված է ատելությամբ, ապա մենք պետք է նրան օգ-
նենք և նրա սիրտը լցնենք սիրով, որ նա Աստծուն
ավելի մոտ լինի: Ճիշտ է, ատելությունը վատ բան
է, բայց երևի այն պետք է նրա համար, որ մարդն
ավելի շատ զգա սիրո կարիքը, որ ավելի շատ
փնտրի սերը: Եկեք հիշենք, որ սերը հաղթում է
ատելությանը, քանի որ այն հզոր զգացմունք է:

Կյուրեղյան Էմնա
7-րդ դասարան, Արտանիշի միջն. դպրոց


ԿՈՒՎ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ



Կյանքը թվում էր անհոգ ու երջանիկ, մինչև չհայտնվեց չարաբաստիկ պատերազմը: Հայտնվեց ու ամեն ինչ կործանեց: Վախով ու սարսափով մտածում էի պատերազմի մասին, և հանկարծ մի օր բանակ զորակոչեցին նաև իմ հայրիկին: Սարսափն ու հայրենիքի կանչը միախառնված ներխուժեց իմ ընտանիք: Սակայն հայրս հայրենիքի հանդեպ լցված էր մեծ սիրով, պատասխանատվությամբ և մեծ համբերությամբ, հրաժեշտ տվեց մեզ ու գնաց բանակ: Ամեն օր նայելով տատիկիս ու մայրիկիս թախծոտ հայացքին՝ աղոթում էի մեր զինվորների, իմ հայ ազգի համար՝ սպասելով, թե երբ է մեր տան դուռը հայրս թակում ու հաղթանակած հետ վերադառնում: Մեր բախտը բերեց. իմ հայրը ետ վերադարձավ՝ ծերացած, հոգեպես տանջված, այդ ամենից հասկացա մի շատ կարևոր բան, որ երբ մարդիկ անհոգ են ապրում, նրանք պետք է գիտակցեն, որ կա հավանականություն, այդ թվացող հավասարակշռությունը, որ կխախտվի, և մենք միշտ պետք է պատրաստ լինենք կյանքի անսպասելի իրադարձություններին:

ՌԵԶԻԶԻՏ
6-րդ դասարան, Երանոսի N1 միջնակարգ դպրոց

ԻՄ ԱՌԱՋԻՆ ՈՒՍՈՒՑԻՉԸ



Իմ կյանքում ամենաթանկ հիշողություններն իմ մանկության հիշողություններն են: Ես հիշում եմ իմ առաջին ուսուցչուհուն, մաև հիշում եմ այն, երբ առաջին անգամ մտա դպրոց, և նա բռնեց ձեռքս ու տարավ մեր դասարան: Հիշում եմ նրա դասերը, որը մեծ հաճույթով էի լսում և սովորում: Նրա շուրթերից ամեն տառը և բառը շատ գեղեցիկ էին հնչում: Այդ ընթացքում դպրոցը ինձ ավելի ու ավելի հարազատ էր դառնում: Հետագայում ուսուցիչներս ավելացան, բայց ինձ համար իմ առաջին ուսուցիչը կմնա ոչ ոքի՝ չմանավոր և ամենավաղ ուսուցիչը:

Հովհաննիսյան Մարիամ
Լալազարյան Ռաֆայել
Խաչատրյան Սիլվա
Սևանի N4 հիմնական դպրոցի
9-րդ ա դասարան

3

